

ԳԼՈՒԲԱԼԱՑՈՒՄԸ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՆՈՐԱՄՈՒՅԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ինովացիոն գործունեության հայեցակարգում ամրագրված է գիտելիքի վրա հիմնված տնտեսության ձևավորման անհրաժեշտությունը¹: Այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ է արդյունաբերության ճյուղում բարձրացնել նորամուծական ակտիվության մակարդակը, համապատասխանեցնել գիտահետազոտական համալիրը շուկայական տնտեսության պայմաններին, ուժեղացնել նոր ձևավորվող ազգային նորամուծական համակարգի պետական և մասնավոր հատվածների միջև կապը: Այս խնդիրների լուծումը կախված է գիտատեխնիկական, նորամուծական և արդյունաբերության ճյուղի արդյունավետ քաղաքականությունների մշակումից:

Այս առումով հետաքրքրական է Եվրամիության (ԵՄ) և Արևմտյան Եվրոպայի առանձին երկրների փորձը նորամուծական գործունեության խթանման գործում: Այդ փորձի շատ տարրեր կարող են օգտակար լինել նաև ՀՀ-ի համար: Վերջին տասնամյակում ԵՄ-ում տեղի են ունեցել զգալի տեղաշարժեր նորամուծական քաղաքականությունում և նորամուծական գործունեության խթանման մեխանիզմներում, ինչպես ազգային, այնպես էլ առանձին երկրների և շրջանների մակարդակներում²:

2000թ. ԵՄ-ն որդեգրեց 2010թ. ավելի մրցունակ տնտեսություն ստեղծելու ուղին, որը հիմնված պետք է լիներ գիտելիքի վրա: Այդ կապակցությամբ ԵՄ-ի գործունեության մեջ գերակա դարձան գիտատեխնիկական, նորամուծական և կրթական ուղղությունները: Մասնավորապես արդեն գոյություն ունեցող ԳՀՓԿԱ-ների ծրագրին նախատեսվում է ավելացնել նաև մրցունակության և նորամուծությունների ծրագրեր (2007-2013թթ.), ինչպես նաև անընդհատ կրթական ինտեգրման ծրագրեր: Այս ռազմավարության զարգացման համար նախատեսված են գիտատեխնիկական ներուժի ապահովմանն ուղղված արմատական միջոցառումներ, ԳՀՓԿԱ-ների վրա կատարվող ծախսերը ՀՆԱ-ի 1.9 տոկոսից հասցնել 3 տոկոսի (2/3-ը մասնավոր ներդրումների հաշվին, իսկ 1/3-ը՝ պետական ծախսերի): Բրյուսելի նոր գիտատեխնիկական քաղաքականության հիմքը դարձել է Եվրոպական գիտական և նորամուծական տարածաշրջանի ստեղծումը (ենթադրվում է, որ ԳՀՓԿԱ-ների վրա կատարվող ծախսերի աճը մինչև ՀՆԱ-ի 3 տոկոսի կհանգեցնի ՀՆԱ-ի 0.5 տոկոսով աճին և 2010թ.-ից հետո կստեղծի տարեկան չորս հարյուր հազար լրացուցիչ աշխատատեղեր)²:

2003թ. Եվրոպական հանձնաժողովը մշակել է ԳՀՓԿԱ-ներում կատարվող ներդրումների խթանմանն ուղղված հստակ գործողությունների նախագիծ, որը նախատեսում է ԵՄ երկրների նորամուծական քաղաքականություններում գերակայությունների փոփոխություն, որի նպատակներն են.

- հետազոտությունների և նորամուծությունների պետական աջակցության արդյունավետության բարձրացումը, անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներով ապահովումը, պետական հատվածում հետազոտական հիմքերի բարելավումը, մասնավոր հատվածի ԳՀՓԿԱ-ներում կատարվող պետական ներդրումների խթանող էֆեկտի ուժեղացումը,

¹ Աղբյուրը՝ ՀՀ կառավարության՝ 2005թ. հունվարի 20-ի N2 նիստի արձանագրային որոշումը «Հայաստանի Հանրապետությունում ինովացիոն գործունեության հայեցակարգի մասին», ընդունվել է 2005թ. հունվարի 26-ին:

² Н. В. Шелюбская, «Новая инновационная политика ЕС», Электронный научный журнал «Региональная экономика и управление», РЭУ, 2/2007.

- պետական ռեսուրսների ուղղորդումը դեպի հետազոտություններ և նորամուծություններ պետական ծախսերի արդյունավետության բարձրացման, բիզնեսի պետական աջակցման կանոնների բարելավման ճանապարհով,
- նորամուծական միջավայրի բարելավումը, մասնավորապես մտավոր սեփականության պահպանությունը, մրցակցության կանոնների, ֆինանսական շուկաների և հարկային համակարգի բարելավումը:

2006-2011թթ. նախանշված է Եվրոպական ինտեգրման գծով հետագա զարգացումներ առավել առաջավոր գիտատեխնիկական ուղղություններով, այդ թվում՝ տեղեկատվական հասարակության ստեղծում, կենսատեխնոլոգիա, նանոտեխնոլոգիա և նոր նյութեր, տիեզերքի ուսումնասիրություն, անվտանգություն և այլն: Կազմակերպական տեսանկյունից համագործակցությունն ընթանալու է այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են.

- այնպիսի կենտրոնների ստեղծումը, որտեղ կառանձնացվեն առավելություններ ունեցող ծրագրերը,
- տեխնոլոգիական մտահղացումների կյանքի կոչումը,
- հիմնարար հետազոտությունների խթանումը հետազոտություններով զբաղվող խմբերի միջև մրցակցության ուժեղացմամբ,
- կադրերի արտահոսքը դադարեցնելու և ավելի բարձր մասնագիտական պատրաստվածություն ունեցող մասնագետների ներգրավման պայմանների ստեղծումը,
- հետազոտական ենթակառուցվածքների ստեղծումը,
- ԳՀՓԿԱ-ների ազգային ծրագրերի գծով կոորդինացիայի բարելավումը¹:

Ի տարբերություն նախորդ ծրագրի, որն ուղղված էր միասնական նորամուծական միջավայրի ստեղծմանը, այս ծրագրում շեշտը դրվում է ռազմավարական թեմատիկ ուղղությունների վրա՝ մասնավոր բիզնեսի շահերը հաշվի առնելով: Միասնական բյուջեի ծախսային մասի նախատեսվող կրկնապատկումը կդառնա ԳՀՓԿԱ-ների վրա կատարվող ծախսերի մեծացման շարժիչ ուժը, ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում:

Արևմտյան Եվրոպայում համագործակցության ակտիվացման շնորհիվ համաեվրոպական ծրագրի շրջանակներում ձևավորվում են միջազգային հետազոտական ցանցեր: Արդեն ձևավորվել է Եվրոպայի երկրները միմյանց կապող մի նորամուծական միջանցք, որը սկիզբ է առնում Իռլանդիայի «Միլիկոնային լեռնաշխարհից», անցնում է «Լոնդոնի եռանկյունով», Փարիզով, Իտալիայի հյուսիսային մասով՝ ճյուղավորվելով մաև Հյուսիսային Եվրոպայի երկրներում: Հետագայում այն կարող է մաև իր շարունակությունը գտնել ԵՄ նոր անդամակցող երկրներում:

Ազգային մակարդակով առավել շոշափելի փոփոխությունները տեղի են ունենում ինստիտուցիոնալ առումով.

- գիտական, մասամբ մաև արդյունաբերական և տարածքային քաղաքականությունները սերտաճում են նորամուծական քաղաքականությանը, և վերջինս տեղափոխվում է տարածքային մակարդակ,
- բարձրանում է պետության դերը բարենպաստ նորամուծական միջավայրի ապահովման հարցում,
- ստեղծվում են մասնավոր գործարարության, պետության և ակադեմիական հաստատությունների համագործակցության նոր ձևեր,
- պետությունն ուղղակի և անուղղակի մեթոդներով խթանում է ԳՀՓԿԱ-ների արդյունքների առևտրայնացմանն ուղղված համագործակցությունը, նպաստում է պետական հետազո-

¹ Зарубежный опыт формирования регионального инновационного потенциала, Электронный научный журнал "Региональная экономика и управление", РЭУ, 2/2007.

տական կենտրոնների գործունեության արդյունքների նկատմամբ պահանջարկի ընդլայնմանը,

- զգալի կառուցվածքային տեղաշարժեր են տեղի ունենում պետական հատվածում, որոնց նպատակը ԳՀՓԿԱ-ների արդյունավետության բարձրացումն է, մասնավորապես պետական գիտական լաբորատորիաների մի մասի փոխանցումը համալսարաններին,
- համալսարաններն աստիճանաբար գիտություն-կրթություն մոդելից անցում են կատարում գիտություն-կրթություն-նորամուծական բիզնես մոդելին, ստեղծվում են նոր կառույցներ (ֆոնդեր), որոնք նպաստում են համալսարանների գիտական ենթակառուցվածքների հզորացմանը և գիտական կադրերի պատրաստման ընդլայնմանը,
- մեծանում է նորամուծական գործընթացների կարգավորման (տնտեսական, սոցիալական, կառավարչական) և խթանման դերը, ինչպես նաև հատուկ նշանակություն են ստանում մտավոր սեփականության պահպանությունն ու հակամենաշնորհային քաղաքականության իրականացումը,
- պետության նորամուծական քաղաքականության մեջ առանձին տեղ է գրավում հասարակության շրջանում գիտատեխնիկական և նորամուծական զարգացման հետ կապված խնդիրների հրապարակմանն ուղղված գործունեությունը,
- ազգային նորամուծական ռազմավարության ստեղծման համար լայն տարածում են ստանում կանխատեսման և գերակայությունների մշակման նոր մեխանիզմները:

Հարկ է նշել, որ ազգային նորամուծական համակարգերի և ձեռնարկության տարբեր մոդելների առանձնահատկությունները էականորեն նպաստում են տարբեր երկրներում ազգային առանձնահատկությունների պահպանմանը՝ նորամուծական քաղաքականության իրականացման ձևերի և մեթոդների ընտրության միջոցով:

Թեև մի խումբ խնդիրներին, որոնց հետ բախվել են վերջին տարիներին Արևմտյան Եվրոպայի երկրները Լիսաբոնյան ռազմավարությունն իրականացնելիս, հատկապես ԳՀՓԿԱ-ների վրա կատարվող ծախսերը ՀՆԱ-ի երեք տոկոսի մակարդակին հասցնելու խնդիրը դեռևս մնում է ԵՄ օրակարգում: Առկա խնդիրների թվում է նաև տնտեսական զարգացման տեմպերի դանդաղումը, մի շարք երկրներում սոցիալական խնդիրների սրումը, էներգակիրների գների կտրուկ բարձրացումը, պետության և մասնավոր հատվածի խիստ տարբեր շահերի զուգակցման հետ կապված դժվարությունները և այլն:

Ընդհանուր առմամբ վերջին տասնամյակում ԵՄ երկրներում փորձարկվել են նորամուծական գործունեության զարգացման խթանման նոր ձևեր ու մեթոդներ, նորամուծական քաղաքականությունը կրել է համակարգային և երկարաժամկետ բնույթ, իսկ Եվրամիության միասնական քաղաքականությունը դարձել է տարբեր երկրների կառավարությունների ու մասնավոր բիզնեսի շարժիչ ուժը:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից նորամուծական գործունեությունը ինստիտուտների մի համակարգ է, որոնց գործունեության արդյունքում ստեղծվում, փոխանցվում են տեխնոլոգիաներ, որոնք էլ ի վերջո միախառնվում են: Տեխնոլոգիական շղթայի ողջ մերուծի բացահայտմանը նպաստում է կազմակերպական կառուցվածքի մի որոշակի համակարգ, որը ներգրավում է տնտեսվարող սուբյեկտներին նորամուծությունների ստեղծման և օգտագործման գործընթացում: Այդ համակարգը ընկած է ողջ տնտեսական համակարգի հիմքում հիմնական ինստիտուցիոնալ նորամուծությունն է, որն էլ ստացել է նորամուծական համակարգ անվանումը: Գոյություն ունեն մի խումբ ներքին և արտաքին գործոններ, որոնք անմիջականորեն ազդում են ազգային նորամուծական համակարգերի զարգացման վրա: Այդ գործոններն են՝

- ինֆլացիայի մակարդակը,
- օտարերկրյա ներդրումները,
- արտաքին պարտքի ծավալը,

- հետազոտությունների և մշակումների վրա կատարվող ծախսերի բաժինը ՀՆԱ-ում,
- կրթություն ստանալու մատչելիությունը բնակչության համար,
- բնակչության եկամուտների դիֆերենցումը:

Գիտելիքը ժամանակակից տնտեսության հիմքն է: Հետևաբար ուսուցումը, որպես մի գործընթաց, որը անմիջականորեն պայմանավորում է նոր գիտելիքների ի հայտ գալը և արդեն գոյություն ունեցող գիտելիքների ընկալումը, դառնում է ամենամշակակալի գործընթացներից մեկը: ՀՀ-ում ազգային նորամուծական համակարգի ձևավորումը ի թիվս այլ խնդիրների, մեծապես կախված է նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում իրականացվող ուսուցման գործընթացից: Ավելորդ է նշել, որ առանց համապատասխան նյութատեխնիկական բազայի և գործնական պարապմունքների անհնար է հաջողված մասնագետի պատրաստումը, որը հետագայում իր գիտելիքներով մրցունակ կլինի աշխատուժի շուկայում: Ներկայումս կրթական համակարգում իրականացվող քարեփոխումները հուսադրում են, որ որոշակի ժամանակահատվածից հետո մեր երկրում ևս կրթության որակը կհամապատասխանի միջազգային չափանիշներին, ինչի արդյունքում էլ կարող ենք ակնկալել նաև ժամանակի պահանջներին համահունչ գիտության մակարդակ: Այս նվաճումների ձեռքբերումը կարող է իրատեսական համարվել, քանի որ մեր երկրում դեռ առկա է այն ներուժը, որի հիման վրա հնարավոր է կրկին հզորացնել գիտությունը՝ շնորհիվ երիտասարդ գիտնականների, ովքեր կկարողանան ժամանակին համընթաց քայլել իրենց հետազոտությունների բնագավառներում: Սակայն այս ոլորտի աշխուժացման տեմպերը պետք է հնարավորին չափով արագացնել, քանի դեռ առկա են այն նախադրյալները, որոնց հիման վրա կարելի է փաստել ներուժի առկայությունը ոլորտում:

Նորամուծական գործունեության ոլորտի զարգացման համար անհրաժեշտ է մի շարք ինստիտուտների առկայություն, մասնավորապես գնահատողի, արտոնագրողի, մարքեթոլոգի, որոնց հիմնադրման նպատակով հարկավոր է ուսումնասիրել և տիրապետել տվյալ ոլորտների հմտություններին: Այս խնդրի լուծման առումով կենսական անհրաժեշտություն ունի զարգացած երկրների փորձի ուսումնասիրությունն ինչպես տեսական, այնպես էլ գործնական տեսանկյուններից: Ակնհայտ է, որ այս ամենի իրագործման համար պահանջվում են որոշակի ծախսեր, որոնց կարելի է կոչել նաև «հիմնադիր ծախսեր»: Որպես ազգային նորամուծական համակարգի ստեղծմանն ուղղված քայլ անհրաժեշտ է, որպեսզի պետությունը այդ ծախսերն ամբողջությամբ կամ մասամբ վերցնի իր վրա: Սա կարելի է դիտարկել իբրև ոլորտի կայացմանն ուղղված սկզբնական քայլ: Ժամանակն է, որպեսզի պետությունը ոլորտի կայացման գուտ իրավական խնդիրներից բացի զբաղվի նաև գործնական քայլերով, ինչի արդյունքում էլ հետագայում հետաքրքրվածություն և շահագրգռվածություն կառաջանա նաև մասնավոր հատվածի շրջանում ակտիվություն ցուցաբերելու և ներդրումներ կատարելու մի ոլորտում, որտեղ արդեն իսկ իր գործունեությունը սկսել է պետությունը՝ որպես ամենավստահելի գործընկեր: